

Հաղորդագրություն

2024 թվականի հունիսի 3-ին կայանալիք Դատավորների ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության վերաբերյալ

2024 թվականի հունիսի 3-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրությունը կազմակերպելու նպատակով Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատարը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 76-րդ հոդվածի 1-5-րդ մասերի կարգավորումներով, 2024 թվականի մայիսի 6-ին ծանուցագրեր է ուղարկել Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուի համար Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված պահանջները բավարարող՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների՝ 10 և մասնագիտացված դատարանների՝ 3 կին դատավորի:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից ստացվել է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թեկնածուների 10, իսկ մասնագիտացված դատարաններից՝ 2 դիմում՝ իրենց անունները քվեաթերթիկում չներառելու մասին, ինչպես նաև՝ քվեաթերթիկում ներառված Վարչական դատարանի դատավորի՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը:

Այդպիսով, 2024 թվականի հունիսի 3-ին հրավիրված Դատավորների ընդհանուր ժողովին Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի ընտրության քվեաթերթիկում ներառվել է մեկ թեկնածու:

Հ/հ	Դատավորի Անունը, ազգանունը, դատարանի անվանումը
1.	Մերի Համբարձումյան (Վարչական դատարան)

Դատական դեպարտամենտ